ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 220 – Ա **03 հունիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել 2020 թվականին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական ու մասնագիտական հսկողության բնագավառները և իրավական ու մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի կողմից իրականացվող իրավական ու մասնագիտական հսկողության գործընթացն իրականացնելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 գրություններով ներկայացված համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված մասնագիտական հսկողության հարցաշարերով.

2) անհրաժեշտության դեպքում իրավական ու մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների.

3) մասնագիտական հսկողություն իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում, աշխատանքային խմբում ներգրավել մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական ու մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական ու մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

03.06.2020

X

ԳՆԵՎՈՐԴ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ GNEVORD SANOSYAN, SERIAL NEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի հունիսի 3 -ի
N 220-Ա որոշման

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

h/h	ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐ
1	ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆԻԿ մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
2	ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆԴԻԿ մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետի տեղակալ
3	ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
4	ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ՀՈԴԱԲԱՇՅԱՆ ԱՐԱՅԻԿ մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետ
5	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԴՎՈՅԱՆ ՍԵՎԱԿ մարզպետարանի ԱՍԱ վարչության պետի տեղակալ

6	ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՄԱՐԱՏ մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետ
7	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ /ընդերք/	ՕՀԱՆՅԱՆ ՍԻՐԱՍ մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ
8	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ
9	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԲԱԴՈՅԱՆ ԱՐՄԵՆ մարզպետարանի ԱՍԱ վարչության սոցիալական ապահովության բաժնի պետի պաշտոնակատար ԳԱԼՈՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
10	ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԽԱՉԱՏՉՅԱՆ ԱՐԱՄ մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
11	ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
12	ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՍԱՖԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ մարզպետարանի ԿՄՍ վարչության կրթության բաժնի պետ

13	ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ՉԱՐՎԱԴԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ մարզպետարանի ԿՄՍ վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
14	ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ՉԱՐՎԱԴԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ մարզպետարանի ԿՄՍ վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
15	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՀԱԿՈԲՅԱՆ ՏԻԳՐԱՆ մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ
16	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
17	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆԴԻԿ մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետի տեղակալ ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ մարզպետարանի ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
18	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար

03.06.2020

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ